№ 6. ՓԵՏՐՎԱՐԻ 13. 1875 ՓԵՏՐՎԱՐԻ 13. № 6.

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 5 ռուբլ, կէս տարվանը 3 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Ծատուրեանի խանութում։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ, Редакція „Мшакъ."

Խմբագրատունը բաց է առաւօտեան 9—12 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզվով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառից մի կոպէկ։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր թղթակիցներին։—Ներքին տեսութիւն։ Թիֆլիսի փոխադարձ կրեդիտի ընկերութիւնը։ Գիւղատնտեսական՝ սագերի պահելը։ Նամակ Շամախուց։ Նամակ Աստրախանից։ Նամակ Մարգարի գիւղից։ Նամակ Գանձակից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Անգլիայի մշակները։ Էլի մի նզով։ Ֆբրանսիական հանրապետութիւն։—Խառն լուրեր։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։—Բանասիրական։ Ինչ է դպրոցը։

## ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԻՆ

—

Թէև շատ անգամ արդէն դիմած ենք մեր թղթակիցներին, շատ անգամ առաջարկած ենք նրանց մեր կարծիքը թէ ինչ ուղղութեամբ պէտք է գրվին թղթակցութիւնները, առաջ ենք նրանց մի քանի անգամ մշակված պրոգրամներ այդ մասին,—բայց այնու ամենայնիւ հարկաւորութիւն ենք գտնում ներկայ տարվայ սկզբում կրկին դիմել նրանց, աւելացնելով անցեալ տարիներին մեր ասածի վրա դարձեալ մի քանի խորհրդներ։

Որքան և լաւ լինէին այն նամակագրութիւնները որ „Մշակը" երեք տարի շարունակ պատիւ ունէր իր էջերի մէջ տպելու, այնու ամենայնիւ նրանց ամենի մէջ կար մի ընդհանուր պակասութիւն, մի պակասութիւն որ յատուկ է բոլոր հայերին։

Այդ որքան և զարգացած, որքան և մտածող լինէր, չէ կարող իրան երևակայել, որ բացի բուն հայոց գործերից, ներքին, ազգային երևոյթներից, հայը ապրելով այլ և այլ պետութիւնների հովանաւորութեան տակ, այլ և այլ ազգութիւնների մէջ՝ նորան շրջապատում են այնպիսի պայմաններ, որք թէև դուրս են նրա անմիջական՝ ազգային օգուտներից, բայց որպէս անդամ հասարակութեան, ունեն նրա վրա մի յայտնի ներգործութիւն։

Մի քանի բացառութիւններ չը յիշելով, որտեղ մեր մի քանի թղթակիցներ խօսում էին, նկարագրում էին և հայոց շրջանից դուրս պատահած երևոյթներ,—թղթակիցների մեծ մասը դարձեալ հաւատացած է մնացել որ մի հայոց լրագրի էջերում կարելի է միայն գրել՝ հայոց ուսումնարանների, հոգաբարձութիւնների, ուխտատեղիների, եկեղեցիների, ընթերցարանների և երեց-փոխանների մասին։

Ոչ թէ միայն մեր գաւառական թղթակիցների մէջ ենք պատահում այդ առանձնութիւնը, բայց և այն մեր դասը, որ իրան լուսաւորված է համարում, թէ ուսանողութեան ժամանակ (վերջին տարիները արդեօք փոխվել են,—չը գիտենք), թէ բարձրագոյն ուսումը աւարտելուց յետոյ, միշտ և ամենայն տեղ անտես է առնում իրան շրջապատող կեանքի այն երևոյթները, որք հայոց շրջանից դուրս են։

Այդ նեղ, սահմանափակված ուղղութիւնը մանաւանդ ուսեալ (?) երիտասարդութեան կողմից՝ անհասկանալի է։ Մի թէ՞ պէտք է մեկնել ամենահասարակ, ամենահասկանալի, տարրական մտքերը.... Մի թէ՞ պէտք է բացատրել այն, որ ապրելով մի հասարակութեան մէջ, բոլորը ինչ որ այդ հասարակութեան մէջ պատահում է, ներգործութիւն ունի նոյն հասարակութեան մէջ ապրող իւրաքանչիւր անդամի վրա։

Երբ որ մի եպիսկոպոս մի քահանայ է ձեռնադրել,—սրա մասին երկար ու բարակ նամակներ են գրում։ Իսկ երբ մի քաղաքում մի հիւանդութիւն կայ, երբ գիւղում նոր եկեղեցափութենից յետոյ, գիւղացիների հողերը ուրիշ կերպ են բաժանվել, կամ մի քաղաքում անշարժ կալուածների վրա աւելացել են կամ պակասել են հարկերը և այլն,—այդ կարծես ներգործութիւն չունի բնակիչների վրա, ուրեմն և հայերի վրա։

Բերենք մի քանի օրինակներ։ Երբ որ Մոսկվայում կամ Ս. Պետերբուրգում սիրողների հայոց ներկայացումն է լինում,—իսկոյն երեք չորս նամակ ենք ստանում այդ անցքի մասին, իսկ երբ Մոսկվայում բազմարվեստական աշխարհահանդէս էր, կամ Ս. Պետերբուրգում վիճակագրական կոնգրէս էր,—ոչ որ ուսանողներից չը հիասքրքրվից այդ երևոյթներով, կամ գոնէ այդ ժողովների այն մասով, որ Կովկասին էր վերաբերում.... Երբ Ռութայիսում ազնուականների բանկ է հիմնվում,—սա Ռութայիսում բնակվող հային չէ վերաբերում, թէև նա ներգործութիւն կունենայ թէ քաղաքի թէ նահանգի վրա, իսկ երբ որ հայոց ուխտատեղում անկարգութիւն է լինում,—այդ մասին գրում են լրագրին մի հինգ վեց նամակ։ Երբ Օշաքաթալում մի հայ քահանայ չը մկրտեց երեխային,—այդ մասին մի տաս նամակ է գալիս վրա վրա.... իսկ երբ լեռնաբնակ ժողովրդի ջանքերով հիմնվում է այնտեղ մի արուեստագործական դպրոց, որտեղ և հայ զաւակները պիտի ուսանեն, և որ կունենայ ահագին ներգործութիւն ամբողջ Օշաքաթալեան շրջանի տնտեսական դրութեան վրա,—լրագրին այդ լուրը հաղորդողը դարձեալ հայ թղթակից չէ լինում։

Մի կողմից հային չէ կարելի մեղադրել այդ ճնշասակար և սահմանափակ ուղղութեան մէջ,—այդ ուղղութիւնը, բացի հայի հասարակաբես անզարգացած լինելուց, նրա մէջ պատուաստ՝ել է մինչև այժմ եղած նորա ողորմելի լրագրութիւնը....

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԹԻՖԼԻՍԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԿՐԵԴԻՏԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

—

Մի քանի ժամանակից գանգատներ են լսվում մեր փոխադարձ կրեդիտի ընկերութեան դէմ։ Որքան ստոյգ են այդ գանգատները, մենք երաշխաւոր չենք,—միայն կասենք որ ընկերութեան օգուտը և նրա բարի անունը պահանջում են՝ բոլոր անդամների հետ անկողմնապահ վարմունքը, որ առիթ չը տրվի գանգատներին և մեղադրանքներին։

Ահա ինչ փաստ են պատմում։ Ընկերութեան մի անդամ կամենալով փոխ առնել մի գումար ընկերութենից, վճռել է գրաւ դնել ընկերութեան մէջ իր տունը. ընկերութիւնը պարտաւոր էր, գնահատելուց յետոյ, կանոնադրութեան զօրութեամբ գնահատված գումարից կէսը տիրոջը փոխ տալ։ Վարչութիւնը բանկի պահանջում է պարտնից նրա կալվածքի ցուցակագրութիւն,—որ և ներկայացնում է նա։ Հաշաթներ են անցկնում, բայց բանկի վարչութիւնը ոչինչ պատասխան չէ տալիս։ Վերջապէս վարչութեան երկու անդամներ յայտնում են պարտնին որ գնահատված նրա տունից ընկերութիւնը չէ կարող ինչպէս նա խնդրելիլ է 2000 ռուբլ տալ այլ միայն 1500։ Տան տէրը այդ բանին էլ համաձայնվում է։ Նրան նշանակում են ժամանակ,—նա գալիս է... ասում են դարձեալ մի շաբաթից յետոյ.... Վերջապէս քանի մի ամիս այս ձևով խեղճ մարդուն չարչարելուց յետոյ, ընկերութեան վարչութիւնը յայտնում է պարտնին որ ոչինչ դումար չէ կարող նրան փոխ տալ նրա տան գրաւականով։—Ինչի՞։—Որովհետև ընկերութեան կանոնադրութեան զօրութեամբ միայն այն տների գրաւականով կարելի է մի գումար փոխ տալ, որք հինգ հազարից պակաս չեն գնահատված։

Ինչի՞ աւելի վաղ չէին ասում այդ և ինչի էին առաջարկում 1500 ռուբլ....

Բայց մի և նոյն ժամանակ պէտք է նկատել որ Թիֆլիսի փոխադարձ կրեդիտի ընկերութեան կանոնադրութեան ոչ մի յօդվածում ասված չէ, որ կարելի է միայն այն կալվածների գրաւականով գումար փոխ տալ անդամներին, որոնք հինգ հազարից պակաս չեն գնահատված։

Այդպիսի դէպքեր, ցաւելով պէտք է ասենք, լաւ լոյս չեն գցում մի ընկերութեան վրա, որ հասարակութեան կողմից կամենում է լիակատար հաւատարմութիւն ստանալ և արդէն ստացել է այդ հաւատարմութիւնը։

Ընկերութեան օգուտն է պահանջում որ այդ տեսակ անզգոյշ վարմունքով նա չը վիրաւորէ իր անդամներին, և յետ չը մղի իրանից հասարակութեան համակրութիւնը, անգիտակցաբար արդելք դնելով ընկերութեան մէջ նոր անդամների մտնելուն։

Ընկերութեան անդամ

## ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ։—ՍԱԳԵՐԻ ՊԱՀԵԼԸ *)

—

Սագերի և բադերի պահելու բաղդ գլխաւոր մասը պէտք է կազմի փոքրիկ լճակը, որի վերա նոցա խմբերը կարողանան լողալ։ Բա-

*) Սագ կը նշանակէ դաղ, гусь. Թիֆլիսցի հայերը սխալմամբ անուանում են սորան բադ (утка, իվվի)։

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԻՆՉ Է ԴՊՐՈՑԸ

—

Ինչ է դպրոցը,—այդ հարցին հազար և մէկ պատասխան կարելի է տալ։ Դիմեցէք այս կամ այն փիլիսոփային, այս կամ այն մանկավարժին,—մէնը մի բացատրութիւն կը տայ ձեզ, միւսը մի ուրիշ... բայց ամենահասարակը, ամենալօգիկականը, դժբաղդաբար, շատ քիչերը կը տան՝ այն է որ դպրոցը կեանքի նախապատրաստական դաստատուն է։

Ինչի մեծ մասամբ երիտասարդը ուսումնարանից դուրս գալով այդքան անտարբեր է, այդքան անտիրձ է, այդքան անօգնական է,—որովհետև ուսումնարանը, նրա ուղղութիւնը, նրա կազմակերպութիւնը մեծ մասամբ ոչինչ յարաբերութիւն չունի կեանքի հետ։ Կեանքը իր ընթացքով է գնում, ուսումնարանը իր ընթացքով։

Ես չեմ ասում թէ իւրաքանչիւր դպրոց, թէ տարրական լինի նա, թէ միջնակարգ, պէտք է պատրաստէ այնպիսի երիտասարդներ, որք աւարտելուց յետոյ, իրանց հետ դուրս բերէին ուսումնարանից մի որ և է արհեստ, որով կարողանային իսկոյն սկսել հաց ճարել,—ոչ, այդ ոչ տարրական, ոչ միջնակարգ դպրոցի պաշտօնն է,—այլ պահանջում եմ, որ դպրոցը տար նրան ոչ թէ վերացական կամ երևակայական դաղափարներ, ոչ էլ կրաւորական, բթացրած էակ անէր նրանից,—բայց տար նրան ուղիղ հայեացքներ կեանքի մասին։ Ես պահանջում եմ որ դպրոցը լինէր նոյն կեանքը փոքր դիրքով։

Ինչ նոր բան էք ասել, կասեն ինձ մասնագէտ, ուսումնական մանկավարժները, ի հարկէ մենք ամենքս պատրաստում ենք երեխաներին կեանքի համար։

Մի թէ՞... ներեցէք, չեմ հաւատում։

Ոչ, շատ անդամ մանկավարժները անում են ուսումնարանի հետ այն, ինչ որ սոցիալիստները անում են հասարակութեան հետ։ Փոխանակ կրթել, ուղղութիւն տալ, նրանք ձևում են երեխաներին, ինչպէս սոցիալիստ-փիլիսոփաները ձևում են մարդիկներին։

Փոխանակ ուսումնասիրել երեխայի բնաւորութիւնը, հաւասարակշռելու ձգտել փոքր էակի մէջ հակասող յատկութիւնները, հաւասարակշռել օրինակ մտածմունքը և երևակայութիւնը, յարմարեցնել նրա ամբողջ ֆիզիկական և մտաւոր կազմվածքը ապագայ կեանքին, պատրաստել կենսական պատերազմին,—մանկավարժներից շատերը զբաղված են միայն նորանով, որ իրագործեն ուսումնարանում իրանց սիստեմը, բայց ունի՞ արդեօք այդ սիստեմը որ և է գործադրութիւն կեանքի մէջ,—այդ նրանց փոյթ չէ։

Նրանք ձևումեն մարդիկ իրանց կերպ, կեանքը անտես առնելով, իսկ յետոյ, եթէ նրանց ձևած էակները իրանց մարդկային սկզբնական բնութիւնը կորցրած՝ անպէտք լինեն կեանքի համար, կամ մինչև անդամ վնասակար յայտնվեն հասարակութեան համար,—նրանց ինչ փոյթ... նրանք հասան իրանց իդէալին՝ ձևեցին ուսումնարանը իրանց սիստեմի համեմատ...

Դիցուք թէ ճշմարիտ բոլոր մանկավարժները համոզված են թէ այնպիսի ուղղութիւն են տալիս դպրոցին, որ իսկ ամենայարմար է կեանքի համար, թէ երեխային ճշմարիտ կեանքի համար են պատրաստում։ Բայց այդ կախված է նորանից, թէ ինչ հասկացողութիւն ունի այս կամ այն մարդը կեանքի մասին։

Մինը մտցնում է ուսումնարանի մէջ երարխիական սիստեմը, ասելով թէ ամեն ուսումնարան պէտք է երարխիական լինի,—ուրեմն նա պէտք է կամ խոստովանի որ կեանքի համար երեխաներին չէ պատրաստում, կամ ուրեմն համոզված է որ մարդկային հասարակութիւնը մի երարխիական կազմակերպութիւն է։

Ճշմարիտ է կան հասարակութեան մէջ հիմնարկութիւններ, որք անրաժան են երարխիական սիստեմայից, և որոնց նա անպատճառ հարկաւոր է, օրինակ՝ կուսակրօն հոգևորականութիւնը, զօրքը և աստիճանաւորների դասը,—բայց ուսումնարանը ոչ վանք է, ոչ զօրանոց և ոչ բիւրօկրատական հիմնարկութիւն է։ Նա նախ և առաջ պէտք է պատրաստի իր պարտք ու իրաւունք ճանաչող, մարդկային ուղիղ մտածող և զգացող էակ, քաղաքացի։

Դիսցիպլինան անհրաժեշտ է ուսումնարանի մէջ, բայց դիսցիպլինայի և երարխիական սիստեմի մէջ մեծ զանազանութիւն կայ։ Դիսցիպլինան անհրաժեշտ է ամեն տեղ՝ հանրապետական պարլամէնտի մէջ անդամ նա անհրաժեշտ է, որտեղ նախագահը խստութեամբ արգելում է այն անդամին խօսել, որ խանգարում է իր ընկերոջ համոզմունքների ազատ արտայայտութեանը մի ճառի ժամանակ....

Բայց մանաւանդ երեխայի բնաւորութեան վրա ազդելու համար անհրաժեշտ է հնազանդութիւնը՝ սա մի հոգեբանական ճշմարտութիւն է։ Երեխան չունի դեռ ևս այն բարոյական ոյժը, որ սանձի իր սեփական ձգտումները. ինչ որ կամենում է՝ պէտք է անի. նրա մօտ դեռ այդքան զարգացած չէ, եթէ այսպէս կարելի է ասել, այն երկրորդ մարդը, այն ներքին մարդը, որ ներկայացնում է հասակ առած մարդու մէջ ամեն անսանձ ձգտումներին ընդդիմադրող ոյժ։

Բայց որքան հարկաւոր է հնազանդութիւն

դերի համար բաւական է և մի փոքրիկ ջրաւլից փոս, եթէ նոքա ուրիշ տեղ մաքուր ջուր ունեն խմելու, իսկ սագերի համար հարկաւոր է մի պարզ և արձակ լճակ։

Մեր ընտանի սագերը ծագում են այն վայրի գորշագոյն սագերից, որոնք բնակվում են հիւսիսային և միջին Եւրոպայի ընդարձակ եղեգնապատ ջրերում և իբրև գաղթական թռչուններ աշնանը և գարնանը կարգով, եռանկիւնի խմբերով թռչում են երկնքի երեսին։ Նոքա թէ իւրանց ձայնով, թէ կերակրով և շատ անգամ իւրանց գորշագոյն փետուրներով, բոլորովին նման են իւրանց ընտանի եղբայրակիցներին։

Սագը շատ մեծ նշանակութիւն ունի մարդու տնային տնտեսութեան մէջ։ Նրա փափուկ փետուրի զգեստը, նրա միսն ու արիւնը նրա իւղը և հաղիւ թէ նրա ամբողջ մարմնի մէջ գտնուի մի փոքրիկ մաս, որ անօգուտ մնայ։ Մեզանում դեռ շատ տեղ նրա փետուրները միակ միջոց են գրելու, իսկ այն երկիրներում, ուր երկաթի գրիչները արդէն բռնել են նրանց տեղը, նոքա գործ են դրւում շատ ուրիշ զանազան բաների համար։ Հազիւ թէ նրա կուսցն ու ոսկորները իբրև անպէտք դէն գցվէին։ Միւս կողմից նրա պահելը ամենևին ծանրութիւն չունի. նա կարող է բազմանալ ամեն տեղ, ուր կլիման և երկրի դրութիւնը ներում են։ Լինելով բուն հիւսիսային թռչուն, նա սակաւ է պատահում տաք երկիրներում. այդպէս հարաւային Եւրոպայում համարեա ամենևին չը կայ։ Ռարեխառն ցուրտ երկիրներում նա փեսրվարին կամ մարտին սկսում է ձու դնել և դորա համար մի տաք անկիւնում ինքը յարդից շինում է տաք բուն, փետում է մի մաս իր կրծքի փետուրներից և փռում է բունի մէջ։ Երբ նա կամենում է թռչել դնում են նրա տակը 12-ից մինչև 14 ձու։ Այդ միջոցին, ինչպէս հնդկահաւերը, նոյնպէս և սրբանք պէտք է օրը մի անգամ առատ կերակուր և մաքուր ջուր ստանան և պէտք է աշխատել որքան կարելի է հանգիստ թողնել նրանց։ Զագերից դեղինները սպիտակում են, իսկ գորշաւունները դառնում են բոլորովին գորշ։ Նոքա պէտք է 24 ժամ առանց կերակրի մնան մօր տակը, իսկ յետոյ պէտք է ստանան մանր փշրած թեփոր ցորենի հաց, խառն բարակ ջարդած նոր և նուրբ եղինջի կամ խոտի ծայրերի հետ։ Ջրի ամանը պէտք է լինի տափակ և մէջտեղը մի քար դրած լինի, որ նոքա շատ չը թրջուին։ Առաջին երկու շաբաթը շատ մեծ զգուշութեամբ պէտք է պահպանել նրանցը նամուենից և ցրտից, և երբ անձրևի երկիւղ կայ, կամ արևի տաքութիւնը զօրեղ չէ, աւելի լաւ է պահել նրանց լաւ վառած սենեակում։ Զագերի սենեակումը եղած ժամանակ, նոյնպէս և գիշերները մօրը պէտք է հեռացնել նրանցից և միայն այն ժամանակ պէտք է թողնել, երբ նոքա դուրսը արածում են։ Նա բարձր ձայնով ողջունում է իր ձագերին, երբ տեսնում է նրանց։ Յետոյ փոքրիկ սագերին պէտք է կերակրել ցորենի թեփով կամ գարիով, եղինջով, հացով և թարմ, բայց չորացրած պանրով։ Այդ բոլորը պէտք է միասին խառնել, բարակ փշրել և կաթով շաղախել։ Պարելի է նոյնպէս և փոքր ինչ եփած գետնախնձոր խառնել։ Սագերի համար բանջար քաղելու ժամանակ, պէտք է զգուշանալ մոլեխինդից (Bilsenkraut, бѣлена) և այլ սորան նման բոյսերից։ Երբ նոքա հինգ կամ վեց շաբաթուայ կը դառնան, նոքա պէտք է ստանան թրջած գարի։ Եթէ նոքա արածում են արօտատեղերում, պէտք է միայն առաւօտը փոքր ինչ, իսկ երեկոյեան կուշտ կերակուր պէտք է ստանան։

Մեծ սագերը ստանում են եփած գետնախնձոր, բոզկ կամ գազար, խոտ, կաղամբ, թեփ և փոքր ինչ ցորեն միայն ձմեռը իսկ ամառը ինքեանք պէտք է գտնեն իրանց կերակուրը։ Աշնանը առհասարակ սագերին չաղացնում են և նոքա բակերից յանկարծ երևում են սեղանների վրա։ Մորթելու սպին պէտք է դցել մի մութ և բաւական նեղ հաւաքուն, որտեղ նա կարողանայ առանց վրդովուելու ամբողջ ժամանակը ուտել։ Բացի դորանից նա պէտք է ունենայ մաքուր ջուր և խոշոր աւազ մարսողութեան համար։ Սկզբում պէտք է կերակրել նրան մանրած գազարով կամ ճակնդեղով, իսկ յետոյ գարով, սիմինդրով, սիսեռով։ Յորենը պէտք է առաջուց թրջել։ Եթէ հարկաւոր է աւելի չաղացնել, պէտք է գարիի փշրանքից ջրով կամ կաթով պինդ խմոր շինել, բաժանել այդ խմորը երկար ու բարակ կտորների, շլորի մեծութեամբ և չորացնել հնոցի առջև։ Յետոյ պէտք է նրանց փոքր ինչ փափկացնել ջրում և օրը երեք անգամ ձեռքով խթել սագի բերանը (ինչպէս որ մեզանում սովորութիւն է հնդկահաւերին ուտացնել ընկոյզ), մինչև որ բողազը լցուի։ Աւելի լաւ մարսելու համար պէտք է փոքր ինչ աղ կամ մսիր ցանել խմորի վրա։ Այդպիսով սագը զարմանալի կերպով կը չաղանայ. ամրակազմ սագը կարող է հասնել 27-ից մինչև 31 ֆունտ ծանրութեան։

Տաք եղանակին և տաք հաւաքնում կարելի է շատ հեշտութեամբ փետել չաղացած սագի կուրծքի, որովայնի և թեւատակերի փետուրները և այդ գործողութիւնը կարելի է այդ տեսակ սագի հետ կրկնել տարէնը վեց անգամ։ Որքան լաւ չաղացրած կը լինի սագը, այնքան լաւ կը լինին փետուրները, այնքան քիչ կը պատահի որ փետուրները կոշտ լինեն կամ որ ծայրերը արիւնով լցուած լինեն։ Մորթած սագին իսկոյն պէտք է փետել, եթէ ոչ փետուրները շատ պնդանում են։

Սագը կարող է շատ երկար ապրել. եղել են օրինակներ, որ սագերը 25 մինչև անգամ 40 տարի են ապրել։ Այդ բացատրվում է նոցա խաղաղ բնաւորութեամբ և անվրդով կեանքով։ Նշանաւոր են այն բազմաթիւ օրինակները, որոնց մէջ երևում է սագերի զարմանալի մտերմութիւնը դէպի միւս կենդանիքը և կամ դէպի մարդը։ Այդպէս մի սագ միշտ գնում էր մի եղջ յետևից, երբէք չէր բաժանվում նրանից, մի ուրիշը մի հովիւ աղջկայ մշտական ուղեկիցն էր....

Իսկ սագերի արթնութեան մասին կը վըկայէ պատմութիւնը, թէ ինչպէս նոքա մի անգամ Հռոմ ազատեցին թշնամի Գալլերից։ Այդ է պատճառ, որ այն ժամանակից աւանդութեամբ մնաց զանազան քաղաքներում քաղաքի ծախսով մի խումբ սագերի միջնաբերդի մէջ պահելու սովորութիւնը.... Բայց և մեր ժամանակի սագերը նոյնպէս պակաս արթուն չեն և այդ կարելի է նկատել ամեն գիւղացի սագապահ շինականի տանը՝ սագերը ամեն մի օտարոտի երևոյթի վերա աղաղակ են բարձրացնում և երկար ժամանակ չեն դադարում և այսպիսով կարող են համարվել շինականի մատնաւոր ընտանեկան կեանքի ամենալաւ պահապաններ։

Ն. Լ.

## ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

Շամախոյ ազգաբնակութիւնը բազմազան չէ. այստեղ բնակվում են միայն Հայեր, Ռուսներ և Թուրքեր, իսկ եթէ կան անչնչան բացառութիւններ, դոքա կայանում են փոքր թուով մալականներ, որոնք դիպուածքով միայն այստեղ բնակվելով՝ տեղական բնակիչ են համարվում։

Շամախոյ հայ բնակիչները սերտ կապով միացած չեն իրանց բուն մայրենի լեզուի հետ, որովհետև բնակիչների մեծագոյն մասը Թուրքեր են և հայերը դրանց հետ սերտ կապակցութիւն ունենալով՝ աղճատել են իրանց բուն հայկական բարբառը պարսկական լեզուի հնչիւններ և բառեր խառնելով նրա մէջ։—Բնակիչների մեծագոյն մասը ապրում է ասիական ձևով. նոցա նիստ ու կացը շատ հասարակ է և պարզ։ Հագուստի նորաձևութիւնը այստեղ թէև չէ ընդհանրացած, բայց և այնպէս բաւական չռայլ. իսկ կերակրի բազմազանութիւնն էլ նմանապէս տարածուած չէ. Դոքա՝ առաւելապէս միջին և ստորին դասի մարդիկը յատակի վերա տարածած գորգերի և կապերտների վերա ծալուպատ նստոտած իւրեանց ընտանիքով—մեծով և փոքրով—վայելումեն հաւեստ կերպով իրանց պարզ կերակուրը։ Իսկ դոցա կանանց համար թէպէտ առանձին սենեակ չէ նշանակած, բայց այնու ամենայնիւ նոքա բաւականանում են ատ մի անկիւնում նահապետական կեանք վարել. տուն հիւր եկած ժամանակն ևս դոքա աշխատում են թաղ կենալ նրա մի անկիւնում վարագոյրի մի կողմը, բացի գերդաստանի մեծ մօրից։ Մի խօսքով դոցա բոլոր հին յատկութիւնները տիրապետում են նոցա կենցաղավարութեան ամեն մի երևոյթների վերա։

Ընդհանրապէս խօսելով՝ Շամախոյ հայ-հասարակութիւնը բաւականի բացված է, ունի սէր դէպի մտաւորական աշխատութիւնը. զլխաւորապէս նա ձգտումն ունի դէպի մի որ և իցէ ազգային ձեռնարկութիւն, բայց բաւականի կասկածաւոր է և անհաւատ դէպի այդ գործադրող անձինքը։ Այս և իսկ պատճառով մի օգտաւէտ գործում ինքնաբաւական կերպով գործի անհամապատասխանող անձինք խառնվելով, արգելք են նրա յառաջադիմութեանը։ Ժողովուրդը ջերմեռանդ է դէպի կրօնական պարտաւորութիւնները, բայց ցաւակցաբար եմ ասում, որ այստեղի մի քանի շահամոլ և անկիրթ հոգևորականներ իրանց յարգ ու պատիւը ժողովրդի մէջ կորցնելով՝ պատճառ են դառնում շատ անգամ նրա (ժողովրդի) դայթագղութեանը։ Շամախեցիք ունեն և մի ուրիշ յատկութիւն՝ այն է օտարասէր են և հիւրասէր. միմեանց հետ իրանց ունեցած յարաբերութեանց մէջ շատ քաղցր և քաղաքավարի, բայց եթէ չեմ սխալվում, ոչ առանց հարստահարութեան սկզբունքի։ Ամեն ոք հարուստի խօսքը անսխալ և պաշտելի է համարում, չը նայելով, որ ինքը շատ անգամ անբաւական է այն հարստի դէպի իւր դէմ վարեցողութիւնից։ Շամախին պատրաստում է իւր համար նոր սերունդ, ապա ուրեմն և լաւ ապագայ։ Այժմ Շամախին ունի մի քանի երիտասարդներ, որոնք ուսանում են Բագու, Տփխիս, Մոսկուայ և Պետերբուրգ. սրանցից մեծ մասը աշխատում են իրանց ուսումը իրանց քաղաքում ծաղկացնելու և քաղաքի միւս պակասութիւնները հոգալու։—Այստեղի Գաւառական ուսումնարանը բաւական յուսով դէպի ինքն է գրաւել հասարակութեան ուշադրութիւնը։ Դասատուութիւնը ընթանում է ուղիղ պեդագոգիական այժմեան պահանջման համաձայն։ Այստեղ ուսանում են այժմ 61 աշակերտ, որոց թուում 40-ը հայի զաւակներ են, 11-ը ռուսի, իսկ մնացեալը Թուրքի։ Հոգևոր դպրոցը իւր ծննդեան օրից մինչև ցայսօր պահպանել է իւր գոյութիւնը (չը նայելով քաղաքիս սովորական ձախորդութեանը, որ շատ ժամանակ սահմանափակ է առնում նրա յառաջադիմութեանը), բայց յաճախակի փոփոխվել է նա զանազան գաղափարների տէր յաջորդների կառավարութեան ներքոյ, որոնք յառաջ են տարել ուսումնարանը իրանց համոզմանցը համեմատ։ Այդ դպրոցը—մեր հասարակութեան զարգացման շարժառիթը—իւր բոլոր գոյութեամբ փոքր ի շատէ օգտակար հետևանք է գործել մինչև ցայսօր։ Ցեսնենք այսուհետև.... բայց մենք յուսով ենք, որ տեղւոյս Սահակ վարդապետը իւր կարողութեանը չափ օր ըստ օրէ կը պայծառացնէ իւր ազգաշահ վաստակը, տալով նրան (ուսումնարանին) կանոնաւոր ուղղութիւն և արդիւնաւոր ընթացք։

Թուրք ազգաբնակութիւնը՝ մի բարձր նշանակութիւն չունի. նա այն առաջնատիպն է պատկերացնում, ինչ որ սեպհական է բոլոր այդ ասիական ցեղերին, թէև այստեղ աւելորդ է խօսել նրա հասարակական գաղափարների հարաբերութեանց մասին։ Ինչպէս ամենուրեք, նոյնպէս և Թուրքերի մէջ ամենամեծ դերը խաղում է կրօնական գաղափարը։ Ինչպէս ամենուրեք, նոյնպէս և Թուրքերի մէջ ամենամեծ դերը խաղում է կրօնական գաղափարը։ Ինչպէս ամենուրեք, նոյնպէս և Թուրքերի մէջ ամենամեծ դերը խաղում է կրօնական գաղափարը։

---

մանուկի համար, այնքան զզվելի է երբ հասակ առած մարդը կորցրած է իր անհատութիւնը և ապրել չէ կարող առանց մի որ և է արտաքին ոյժին հնազանդվելու։

Բայց իսկ այդ կրաւորական դրութեանը կեանքի ամբողջ ընթացքի համար՝ կընդդեմ մարդուն երարխիական ուսումնարանը։

Երարխիական սիստեմը չէ թոյլ տալիս, չէ կամենում և չէ կարող մեկնութիւն տալ թէ ինչի նա պահանջում է հնազանդութիւն։

Երեխան պէտք է հնազանվի, որովհետև՝ պէտք է հնազանվի։ Ուրիշ մեկնութիւն չը կայ։ Եւ այդ է թողնում ամբողջ կեանքի համար մի մարդու վրա կամ խորին կրաւորականութեան զրօչը, կամ անտեղի ինքնավստահութիւն....

Երարխիական սիստեմը ամեն տեղ և միշտ հասցրած է մարդուն երկու ծայրահեղ դրութիւններին՝ կամ անչափ մեծ կրաւորականութիւն, կամ յանկարծ վերին աստիճանի անընդունակութիւն մի որ և է սիստեմայի, լոգիկական դեսցիպլինայի առջև խոնարհվելու։

Դպրոցական դեսցիպլինան, որքան խիստ և լինէր, երեխայից հնազանդութիւն պահանջելու ժամանակ, պէտք է միշտ բացատրէ երեխային ինչի նա նրանից հնազանդութիւն է պահանջում։ Երարխիական սիստեմի ժամանակ այդ անհնարին է անել, իսկ այդ անչուշտ հարկաւոր է, որովհետև նա անազին ներգործութիւն ունի մանուկի ապագայ կեանքի վրա։ Մանուկը մարդ դառնալով, չի հնազանդի անխտիր ամեն բանին, որովհետև ուսումնարանում նրանից անպայման և անդիտակցական հնազանդութիւն չէին պահանջում, բայց կը հնազանդի այն ժամանակ, երբ հարկաւոր է, երբ մտածելուց յետոյ, կը գտնի որ անհրաժեշտ է։

Երարխիական սիստեմը, եթէ կամենում է յաջողդաբար վարվել, ոչ մի պատժի մեկնութիւն չը պէտք է տայ երեխային՝ դու. աղմուկ արեցիր դասատուութեան ժամանակ, պէտք է պատժվես, ինչի,—հարկաւորութիւն չեմ տեսնում մեկնել, պէտք է հնազանդվես։ Ահա այն մտախորհութիւնը, որին պէտք է հետևի երարխիական կազմակերպութեան կուսակիցը, այն ինչ կարելի է, հետևելով դպրոցի մէջ ամենախիստ դիսցիպլինայի էլ, հնազանդութեան պահանջը զիտակցական անել երեխայի մէջ՝ դու աղմուկ արեցիր դասատուութեան ժամանակ, սորանով դու ցոյց ես տալիս որ չես պատուում քո ընկերների իրաւունքը հանդիստ դաս առնելու. նրանց խանգարեցիր, ուրեմն պէտք է հնազանդվես և պատժվես։ Մինը անգիտակցական, բթացնող հնազանդութիւնը է, միւսը զիտակցական, զարգացնող, բարոյականացնող։

Այդտեղ չենք կարող չաւելացնել, որ անցան այն ժամանակները, երբ մանկավարժութիւնը միայն այդ ճիւղը ուսումնասիրած մասնագէտների արտօնութիւն էր համարվում, ինչպէս ադվոկատութիւնը երդուեալ փաստաբանների արտօնութիւն է,—ոչ, այժմ պէտք է Էդուարդ Լասկէրի հետ միասին կրկնենք նրա զեղեցիկ խօսքերը *) «Դաստիարակութիւնը մի քանիսների բացառական կոչումը չէ, նա բաժին է դարձել գրեթէ իւրաքանչիւր հասակ առած անձի գործունէութեան շրջանի։ Կարելի է նա միակ առարկայ է հասարակական հոգսերի, որին համայն մարդկային ցեղը մասնակցում է հաւասարապէս։»

Անցան այն ժամանակները, երբ երդուեալ, մանկավարժները կարող էին այս կամ այն անընդունակ, երևակայական մանկավարժական սիստեմը մացնել դպրոցի մէջ, առանց ենթարկվելու հասարակական կոնտրոլի։

Թող ինքն հասարակութիւնը հսկէ իր երեխաներին դասախարակողների վրա։

Ես ասացի և կրկնում եմ՝ ուսումնարանը պէտք է պատրաստի մանուկին կեանքի համար, նա չէ կարող հիմնել իր սիստեմը օդի մէջ, կեանքից դուրս, անտես առնելով կեանքը։

Բայց այդ չէ նշանակում որ կեանքին յարմար մի ուսումնարանի կազմակերպութիւնը, օրինակ հիւսիսային Նորվէգիայում, կարելի էր ամբողջութեամբ տեղափոխել Իտալիա, Կովկաս կամ այլ տաք կլիմա։ Օրինակ սառը հիւսիսային գերմանացի կամ նորվեգացի երեխայի մէջ գերակշռումէ մտածմունքը երևակայութեան վրա, այն ինչ մեզ մօտ ընդհակառակն երևակայութիւնը՝ համեմատելով մտածմունքի կարողութեան հետ, այնքան զարգացած է ի բնէ, որ նրան պէտք է սանձել և ոչ թէ աւելի էլ արգելել մտածմունքի զարգացմանը, զրգռելով երևակայութիւնը՝ վառված կրօնական առասպելները մանուկներին պատմելով. Երեխայի կազմվածքը այդպիսով բոլորովին կորցնելու է հոգեկան հաւասարակշռութիւնը, ենթարկվելով անդադար ջղային սիստեմի զրգռման....

Զնակերպում եմ կարճ կերպով մտքերս՝ ասելով կեանքին յարմար, կամ մանուկներին կեանքի համար նախապատրաստող դպրոցի մանկավարժական սիստեմը, պէտք է աչքի առջև ունեցած՝ բացի երեխայի մէջ ընդհանուր մարդկային յատկութիւնների կանոնաւոր զարգացնելը, նոյնպէս և կլիմայական և հասարակական առանձնութիւնները, տեղական պայմանները։

***

*) „Ueber Anlagen und Erziehung“ (Deutsche Rundschau. November 1874).

ների վերա, բայց դաստիարակութիւն ասած բառը նոցա անհասկանալի է երբէք։ Նոցա միակ կրթարանը իրանց մզկիթն է, ուր մի քանի թուրք երեխայք թափված յատակի վերա խառնիճաղանճ կերպով խլացնում են մօտով անցուդարձ անողների ականջները։ Երբ այստեղից նաքա վերջացնում են իրանց ուսումնական շրջանը (կուրսը), այնուհետև նոքա կրթուած են համարվում։ Նոցա բարձր և ազնուական դասը ուսումն աւարտելուց յետոյ, ուղարկում են իրանց զաւակացը կամ Բաղուայ գիմնազիայն առհասարակ և կամ թէ տեղւոյս զաւառական ուսումնարանը, որտեղ նոքա իրանց անհիմն սկզբնական տարրական ուսման պատճառով, զրեթէ ոչինչ չեն կարող սովորել, դուրս բերելով իրանց հետ շատ շատ մի աղճատած ռուսերէն լեզու։

25 յուն. Ա. Գալստեանց

## ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

21-ին յունվարի այստեղի ձմեռվան թատրոնումը յօգուտ Աստրախանի հայ ներկայացմանց կառավարիչ պ. Ալաբեանի, տրվեցաւ հայերէն ներկայացումն «Ելեօնօրա» դրամայ հինգ արարուածով, թարգմանութիւն գաղղիերէնից և «Անծանօթները» մի վոդեվիլ։ Թատրոնումը մեծ բազմութիւն կար, բացի բազկաթոռներից բոլոր տեղերը բռնված էին։ Խաղարկութիւնը, ինչպէս և միշտ, գնաց միջակ կերպիւ և այն ի շնորհս իւր Ալաբեանի, որը կարելի է ասել բաւականացուցիչ էր. մնացածներից մի քանիսի մէջ մանաւանդ պ. Բաղրամեանի, եթէ ձիրք էլ երևում էր, սակայն խակ և բեմական արհեստին անտեղեակ. իսկ դերերը և ոչ ոք չը գիտէր։

Առ հասարակ չէ կարելի պահանջել Աստրախանու հայ խմբից սրանից աւելի, և ճշմարիտն ասել, միայն Ալաբեանի թատրոնասիրութեան ենք պարտական սրանով, որը նուիրել է իւր անձը իրեն նիւթականութիւնը վնասող գործոյն և ուզում է մեր մեռեալ Աստրախանի հայերիս մէջ արծարծել հայ բեմասիրութիւնը։ Մենք կասենք, այո՛ շատ բան, կը սիրենք թատրոն, ինքներս եթէ պէտք լինի բեմ անգամ դուրս կը գանք, դրմակներ կը հագնենք, բայց միայն ոչ հայերէնի և հայերի համար։ Առաջին անգամն էր այս տարվան հայերէն ներկայացումներից, որ այնպէս բազմութիւն ունեցաւ. այն էլ եթէ չեմ սխալվում, պէտք է, որ տոմսակները դռնէ դուռն մուրացկանութիւն արած լինէին ինչպէս և ամէն տեղ։ Մի կողմից էլ չէ կարելի մեղադրել մեզ Աստրախանի հայերիս այնպէս սառն լինելուն։ Ամէն տեղ որ և իցէ զարգացման կամ յառաջադիմութեան քայլ սկսվում է ուսեալ երիտասարդներից, որոնք յաղթելով ամէն դժվարութեանց և նախապաշարմանց, իրենց գիտութեանց ստացած համոզմանց համեմատ աշխատում են մտցնել ժողովրդի մէջ օգտաւէտը և արմատախիլ անել վնասակարը։ Մեր Աստրախանը այդ բանով հայութեան մէջ շատ ապարդի է, մեզանում չկան այդպիսի եռանդուն երիտասարդներ և եթէ մի երկու հատ երևում են և կան, նոքա ևս լինելով բարձր դասակարգից, ոչ միայն չեն համակրում կամ մասնակցում ամէն այնպիսի ազգային ձեռնարկութեանց, այլ և եթէ չեմ սխալվում, կասեմ ամաչում են հայ ներկայացումներին հանդիսատես անգամ լինելը, որոնցով հասարակութիւնն էլ խրախոյս առած համակրէր։ Ես չգիտեմ, գուցէ աւելի ճիշդ աչքով են նայում այդ յառաջաւոր երիտասարդները հայութեան գործերին և Աստրախանու հայ թատրոնի գոյութեանը, գուցէ դերասանների խակութիւնը կամ իւրեանց դասակարգից չլինելը յետ է խփում սոցա նրանցից, գուցէ վիրաւորուած են պ. խմբապետ Ալաբեանից դէպի իւրեանց խորհուրդը չդիմելու համար։ Վերջին պատճառովս ես իրաւունք կը տամ մեր հասկացող երիտասարդներին, ըստ որում պ. Ալաբեանին կամ իւր խմբին երբէք պակասութիւն և նախատինք չէր համարվիլ, եթէ դիմէին այդ մի քանի հասկացող երիտասարդներին և խնդրէին ներկայացնվել կրկնութեանց ժամանակը, մանաւանդ որ այն երիտասարդների մէջ կան բեմական արհեստը լաւ հասկացողներ։ Ես բաւական տրտունջ լսեցի ժողովրդի մէջ այն երեկոյին մեր Աստրախանի երիտասարդների այսպէս անտարբերութեան համար։

Ալաբեանի խումբը կազմուած սիրողներից և մի օրիորդից՝ յառաջ եկաւ պ. Ֆասուլաճեանի մեր քաղաքումը երևելուց յետոյ։ Ժամանակ առ ժամանակ պ. Ալաբեանը տալիս է ներկայացումներ հայերէն լեզուով և միշտ անյաջող՝ թէ ներկայացնողների խակութեան և թէ հասարակութեան անհամակրութեան պատճառաւ։ Նոյն իսկ պարոն Ալաբեանն ևս մեծ պակասութիւններ ունի. բայց եթէ մենք ներողամտաբար ենք նայում, այս ի պատիւ իւր թատրոնասիրութեան և անձնանուիրութեանն է։ Մնացեալ ընկերների և մանաւանդ օրիորդի վրա խօսելն անգամ աւելորդ է, այնքան թերի և խակ են։ Այս բանում ներելի չէ պ. Ալաբեանին անուշադիր թողնել իւր խումբը կատարելագործելու խնդիրը. մենք չենք պահանջում բոլորովին վարժ դերասաններ, գոնէ բեմի վրա ոտք փոխել սովորէին կրկնութեանց ժամանակ, կամ իւրեանց դերերը անգիր սերտէին որ յուշարարի կրկնածը բոլորը միասին չը ձայն տային, չը գիտելով թէ ո՞ւմ համար է ասում. մանաւանդ աղջիկը որ այսքան տարի բեմ է դուրս գալիս և դեռ հասարակ ընթերցանութիւն չը գիտէ, ասում են. այդ է պատճառը որ շարժուն արձան է խեղճ աղջիկը բեմի վրա և այլ ոչինչ, որը բացի համբոյրներից ոչինչ չի դուրս տանում բեմի վերայից։ Ի դէպ. թող ներէ մեզ պ. Ալաբեանը, եթէ մենք կասենք որ թատրոնը իւր կանոններն ունի և չէ կարելի ճիշդ բնականին յարմար դուրս բերելու համար, դիպչել սուրբ պարկեշտութեանը. եթէ ուրիշ աղջերին իւրեանց կեանքի պահանջանց համեմատ կարելի է, մեր հայերիս համար չատ անտեղի է և վաղ։ Համբոյրների արձագանքը թնդում էր գալերէյի հեշտասէրների բերանից....

Ժողովրդեան ծափահարութեան խրախուսանաց հետ, մենք ևս այս մի քանի տողովը յայտնելով մեր կողմից շնորհակալութիւն պ. Ալաբեանին իւր խմբի հետ, կը յուսանք, որ նա այսուհետև իւր թատրոնասիրութեան եռանդը միակողմանի չի տանիլ և խորհրդակցելով հասկացող երիտասարդների հետ, մի յառաջադիմութեան և տոկունութեան զարկ կը տայ հայ ներկայացումների խնդրոյն Աստրախանի մէջ։

Անտրակտների միջանկեալ երգերի և ընթերցումների համար թող ընդունէ պ. Գօրկի ռուս երիտասարդը մեր ջերմ շնորհակալութիւնը։ Վատ չէր և Բաղրամեանցը։

Թատրոնասէր

## ՆԱՄԱԿ ՄԱՐԳԱՐԻ ԳԻՒՂԻՑ

Բացի Սարտարապատ գաւառը, չատ սակաւ տեղեր մնացին, որոց բնակչաց սովորութիւնները և յատկութիւնները հայ լրագիրները յայտնած չը լինեն։

Սարտարապատ գաւառակը չունենալով փոքր ի չատէ հասկացող երիտասարդներ և ընդունված չը լինելով ուսումնական ճանապարհորդների հետազօտական այցելութիւնը, անյայտ է մնացել իւր գիւղերով։ Իմ նպատակից վեր է քննողական հայեացք ձգել այդ գաւառի բնակչաց դրութեան վերա։ Միայն մի խօսք կը կամենայի ասել նոյն գաւառի մէջ գտանվող՝ Մարգարի գիւղի ժողովրդական լուսաւորութեան տխրալի դրութեան վրա։ Այս գիւղը գտանվում է Երասխ գետի ձախ ափի վերա, 100 տուն զանազան տեղերից գաղթական հայ բնակիչներով. և հիմնուած է, ինչպէս աւանդութիւնը պատմում է, Երևանայ Պարսից վերջին կուսակալ Սարտարի օրով մի մշեցի Մարգար անուն մարդուց։ Դեռ թողնելով այս գիւղացւոց տնային և հասարակական կեանքը մի ուրիշ յարմար ժամանակի, դառնամ դէպի նամակիս շարժառիթը։

Մարգարի գիւղացիք փոքր ի չատէ ունելով ուսման ճաշակը, բայց չը կարողանալով գնահատել իւրեանց մէջ մուտ գործող տիրացուներին, սիրով յանձնում էին նոցա իւրեանց մանուկների դաստիարակութիւնը, ձմեռը գոմերի մի անկիւնում պատրաստած տեղում։ Բայց չատ անգամ այս կոյր ընտրութեան վնասը ընդունելուց յետոյ, հաղիւ կարողացել են իւրեանց կարծած փիլիսոփաներին արուաքսել։ 1872 թուերի վերջերում վերև յիշուած տիրացուների նման մինը նորից մըտաւ Մարգարի գիւղը Հայկ անունով։ Սա լինելով Ցաճկստանցի, իր հայրենակիցներին յատուկ հայրենասիրութեան զգացմունքով զրաւեց բոլոր ժողովրդի սիրտը, և համարելով ինքեան խրիմեանի աշակերտ, մեծ պատիւ էր ստանում. բայց նորա ուղղութիւնը վերջապէս մատնեց նորան իբրև կեղծ հայրենասէր, և այլ պակասութիւններ ունեցող... և այս իւր յատկութիւններով մի քանի անգամ սաստիկ անբաւականութիւնները յարուցելուց յետոյ, հաղիւ փախաւ Տճկաստան։ Բայց այնտեղից իւր եղբօր հետ նորից յայտնուեցաւ Մարգարի գիւղում։ Բայց այս անգամ ոչ իբրև վարժապետ....

Թողնելով այդ անձի մանաւոր կեանքը, մենք հարցնում ենք արդեօք Մարգարի գիւղացիք դարձեալ տանելու են այս ողորմելի դրութիւնը....

Ցանկալի է որ այս նամակը կարդալով, հայ գիւղացիք զգուշանային ամեն մարդու հաւատ ընծայել, յանձնելով ձվ գիտէ ինչ անձանց իւրեանց որդւոց դաստիարակութիւնը։

Մ. Գ. Թ.

## ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Երեկ, ամսոյս 5-ին այստեղ կատարվեց թուրքերի մահառլամ անուանեալ տօնը։ Թուրքերը միշտ խուռն բազմութեամբ մեծ փողոցի հրապարակովը անցնելով, գնում են իրենց մզկիթը։ Այդ օրը որովհետև թուրքերի կողմից մեծ անկարգութիւններ են պատահում, և նրանց ու հայերի մէջ միշտ անբաւականութիւններ են ծագում,—հայերի բոլոր խանութները այդ օրը փակած են մնում։ Զարմանալի կերպով կատաղում են թուրքերը այդ տօն օրերին՝ քարեր են գցում որտեղ տեսնում են բաց խանութներ, փողոցում պատահող հայերին բռնում են ու ծեծում, այնպէս որ հայերը երկիւղից այդ օրը փողոց էլ չեն դուրս գալիս։ Այս տարի չը նայելով, որ տեղական պօլիցիական վարչութիւնը իր զգուշաւոր կարգադրութիւնն արեց, անկարգութիւններին առաջն առնելու համար,—բայց դարձեալ ժողովուրդը չը վստահացաւ տանից դուրս գալու, խանութները մնացին փակած։ Ժողովրդին չէ կարելի մեղադրել, ըստ օրում նա այդ կողմից չատ փորձեր փորձեց անցեալում։—

Լսում ենք որ այս օրերս եկած է հոգեոր ղեկավարի նոր ընտրած հոգաբարձուների հաստատութիւնը, բայց թէ երբ կարժանանան նորերը յանձնողական և ստացողական ցուցակի տակ ստորագրել,—այդ յայտնի չէ դեռ ևս։ Զար լիզուները ասում են որ այդ բանը լինելու էլ չէ, որ նա երաշ պիտի մնայ նորերի համար։—

Մի չատ հետաքրքիր անցք են պատմում տեղիս հայոց դպրոցի մասին։ Երկու օր շարունակ ձիւն եկաւ այստեղ, այնպէս որ այս տարի մեր քաղաքը առաջին անգամն է որ ձիւն է տեսնում։ Ցանկարծ այսօր լսում ենք որ դպրոցի մէջ ձիւնի պատճառով աշակերտները աւելի վաղ են արձակվել դասերից՝ փոխանակ 2-ին, ինչպէս միշտ, իրանց օրական ուսումը վերջացնելու, նրանք արձակվել են ժամը 12-ին։ Ինչ է պատճառը, և ինչ յարաբերութիւն ունի ձիւնը ուսման հետ, մինչ Գանձակում եկած ձիւնը ուսման թշնամի է... Բայց հանելուկը չատ հեշտ է մեկնվում՝ դպրոցի շինութիւնը այնքան լաւ է և հին հոգաբարձուները այնքան քիչ են մտածել նրան նորոգելու, որ երկու, երեք օր ձիւնը դպրոցի կտուրի վրա մնալով, բոլոր դասատուները սկսեցին կաթել... Այնու ամենայնիւ հին հոգաբարձուները հաւատացնում են որ փող են յետ գցել շինութիւնը վերանորոգելու համար....

Փետրվ. 6. Գանձակեցի

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս անցեալ համարում խոստացած էինք, ահա տալիս ենք այս համարի ներքին տեսութեան մէջ մի գիւղա-տնտեսական յօդված ընտանի մի քանի թռչունների պահելու մասին։

***

Բաղուից մեզ գրում են, որ յունվարի 29-ին, չը նայելով թէ որքան թանգ էր պահանջում այդտեղի կլուբը դահլիճի վարձի համար, չը նայելով ուրիշ անպէտ և ճնշող պայմաններին,—դարձեալ հայոց թատրոնասէրների ներկայացում կայացաւ։ Ցուցեցին «Վարդան Մամիկոնեան» ողբերգութիւնը և «Գիշերվայ սարը խեր է» վոդեվիլը։ Բայց նամակագիրը ցաւելով աւելացնում է՝ փոխանակ որ ներկայացնողները նիւթական օգուտ ստանային,—բաւական վնաս են կրել....

***

„Кавказъ“ լրագիրը տեղեկացել է, որ պ. Մ. Միանսարեանը, Ս. Պետերբուրգում, չուտով հրատարակելու է իր վաղուց սկսած աշխատանքը՝ մի ցուցակ հայերէն բոլոր գրքերի, որք տպվեցան սկսած XV դարից։

***

Փետրվարի 5-ին, չորեքշաբթի օրը, կրկին եղաւ նիստ Թիֆլիսի Դումայի։ Պ. պ. Քեթիսուդով և Շահզինարով հրաժարվեցան գնահատողների պաշտօնից։ Նոյն նոսի մէջ յարուցվեցաւ իրաւական յանձնաժողովը կազմելու մասին հարցը, բայց բազմութենից մերժվեցաւ։ Պ. Ա. Զուբաչով մի առաջարկութիւն արաւ մշտական վեց յանձնաժողովներ ընտրելու և հաստատելու։ Պ. Ճանաւորի այդ առաջարկութիւնը այնքան նշանաւոր է և հետաքրքիր, որ մենք խոստանում ենք սորա մասին առանձնապէս խօսելու։

***

Պ. Սեդրակ Մանդինեանի պատասխանը կարդալուց յետոյ, պարտաւորութիւն է համարում խմբագրութիւնը յայտնել, որ նա մի նոր դուրս եկած գրքոյկի մասին մատենագրական քննադատութիւն տպելով, բոլորովին նպատակ չունի և չէ էլ կարող ունենալ պօլեմիկ սկսել հեղինակի անձի հետ։ Եւ ապագայումն էլ խմբագրութիւնը իրան իրաւունք է պահում քննադատել նոր դուրս եկած գրքերը։

***

Մեծ-Շուլաւերից հաղորդում են մեզ որ այս տարի գիւղի երկրագործ ժողովուրդից շատերը սկսել են ծախել իրանց ունեցածը և հեռանալ ուրիշ տեղեր։ Ասում են չուտով նոցա կէսը չի մնայ այդտեղ։ Այդիները ծախվում են աւելի և աւելի։ Այս մասին ուշադրութիւն ենք դարձնում Թիֆլիսի հարուստ գումարատէրերի՝ այսպիսի պղտաբեր և մի ժամանակ ճշմարիտ հարուստ գիւղ, մինչ պէտք է կորչի, անհետանայ Ջրի պակասութեան պատճառով, այն ինչ այնպէս հեշտ կը լիներ ջուր հանել Բորչալուի գետից։ Եւ սա այնպիսի մի շահաւէտ գործ է, որ ինչպէս ժողովուրդը ջուր ունենալով, չուտով այժ կը ստանայ կրկին ծաղկեցնելով իր երկրագործութիւնը, այնքան էլ ջուրը կապալով վերցնողը կրկնապատիկ նիւթական օգուտ կը ստանայ։

***

Մեզ հաղորդում են Զաքաթալից, որ այնտեղի սարերի բնակիչները, լեզգիները, իրանք դիտել են շրջանի կառավարչին, պ. Շօլկօվնիկովին, խնդրելով նորանից աշխատել իրագործել Զաքաթալի մէջ արուեստագործական ուսումնարան։ Բնակիչները իրանք նուիրումն են մի բաւական նշանաւոր գումար և պէտք է տարից տարի որոշ նուիրատուութիւններ անեն։ Պ. Շօլկօվնիկովը արդէն ձեռք է տուել այդ գործին և որոշել է գետինը, որի վրա պիտի կառուցվի շինութիւնը։

***

Թիֆլիսի քաղաքային Դումայի փետրվարի 5-ին եղած նստի մէջ զեկուցումն արած էր Թիֆլիսի պ. նահանգապետի առաջարկութեան մասին, քաղաքում դռնապաններ կարգելու վերաբերութեամբ։ Ժողովը վճռեց, փոխանակ մասնաժողով նշանակել այդ մասին, յանձնել այդ հարցը վարչութեանը, որ սա իր դատողութիւնները որքան կարելի է չուտ ներկայացնէ Դումայի քննութեանը։

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԱՆԳԼԻԱՑԻ ՄՇԱԿՆԵՐԸ

Երբէն վաղուց է, որ լսում ենք ինչպէս Անգլիայի մէջ պարբերական կերպով մշակների խռովութիւններ, աշխատանքի դադարումներ, տէրերի և աշխատողների մէջ անբաւականութիւններ են պատահում։ Այս տեսակ անբաւականութիւնների ժամանակ մեծ մասամբ երկու կողմերն էլ հաշտվում էին, միմեանց որքան հնարաւոր էր զիջումներ անելով։

Ուրիշ կողմից մշակներին, ծանր և դժուար բոպէներում, երբ նոքա իրանց իրաւունքը պահանջելու համար, պէտք է օրերով, շաբաթներով, ամիսներով անգամ մնային անգործ և հացի կարօտ,—այդ տեսակ բոպէներում նրանց պահպանում էին գլխաւորապէս աշխատողների զանազան ընկերակցութիւններ, և մասամբ հասարակական բարեգործութիւնը։

Հատ ժամանակ չէ որ Դինֆօրեսաի մըշակները երկար դադարում անելուց յետոյ, վերջը համաձայնվեցան կրկին աշխատել սկսել, չը նայելով որ տէրերը նրանց պակասեցրին 5 պրոցենտ առաջվայ վարձից։ Իսկ այդ աշխատանքի դադարման պատճառը այն էր, որ տէրերը սկզբից կամենում էին պակասեցնել մըշակների վարձից 10 պրոցենտ։ Մշակները ապստամբվեցան տէրերի դէմ, բայց վերջը երկար համբերելուց յետոյ, համաձայնվեցան բաներ և 5 պրոցենտով պակասեցրած վարձով։

Այժմ յայտնվեցաւ Անգլիայի Ուէլս նահանգում մի աւելի էլ նշանաւոր աշխատանքի դադարումն, այնտեղի հանքագործ մշակների մէջ։ Սկզբից ապստամբված մշակների թիւը 60 հազար մարդ էր, յետոյ 80 հազար, իսկ այժմ 120,000, որոնք մնացին առանց մի կտոր հացի և առանց աշխատանքի։ Եթէ այդ տնտեսական երկպառակութեանը վերջ չը դրվի փոխադարձ զիջումով՝ մշակների և տէրերի կողմից,—այն ժամանակ կարող է մեծ վտանգ սպառնալ երկրին, որովհետև այդ տեսակ մեծ բազմութեան մշակների, որք մնացին անգործ և հացի կարօտ,—անկարող են օգնել՝ ոչ հասարակական բարեգործութիւնը, ոչ էլ մշակների ընկերակցութիւնները։

## ԷԼԻ ՄԻ ՆԶՈՎ

—

Հռոմի անսխալականը շարունակում է այս կողմ, այն կողմ նզովքներ բաժանել։ Երկրիս վրա իրան Քրիստոսի փոխանորդ անուանողը մոռացել է՝ ողորմութիւն, շնորհ, ներում, թողութիւն...նա միայն մի բան է ճանաչում՝ նզով։ Վերջին հեռագիրը բերում է մեզ հետևեալ լուրը՝ Հռոմի պապը հրատարակեց մի ուղերձ Պրուսիայի եպիսկոպոսներին, որտեղ նա պարսաւում է գերմանական տերութենից հրատարակված եկեղեցական նոր օրէնքները և հրաժարեցնում է եկեղեցուց այն ամեն հոգևորականներին, որք հաստատված են տերութենից։

Բայց բաղդաւորապէս մեր ժամանակին նզովքները կորցրել են իրանց ոյժը, էլ չունեն ոչինչ ներգործութիւն։ Թող հազար անսխալական պապերը հրաժարեցնեն ազատամիտ հոգևորականներին իրանց եկեղեցուց,—բայց նոյն հրաժարեցրածները կարող են դարձեալ իրանց անհատական հաւատ ունենալ և իրանց համարել դուցէ ոչ պաշտօնական եկեղեցուն պատկանած, բայց այնու ամենայնիւ հաւատարիմ մնալ մաքուր կրօնքին։

## ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

—

Անցեալ համարում մենք կանգնեցինք Վերսալի ազգային-ժողովից պ. Լաբուլէի առաջարկութեան չընդունվելու վերա։ Այժմ մենք պէտք է աւելացնենք որ նորանից յետոյ ազգային-ժողովին արաւ մի առաջարկութիւն պատգամաւոր Վալլօն, ձևակերպելով նորան այսպէս՝ հանրապետութեան նախագահին իրաւունք է տրվում ազգային-ժողովը արձակելու, սենատի համաձայնութիւնը ստանալուց յետոյ։ Այդտեղ նշանաւոր է հանրապետութիւն բառը, որ կրկին մտնվեցաւ առաջարկութեան մէջ որպէս պաշտօնական գաղափար, չը նայելով որ աջակողմեան պատգամաւորները աշխատում էին ամեն միջոցներով ջնջել նրան առաջարկութեան ձևակերպութեան միջից։ Պատգամաւոր Վալլօնի այդ առաջարկութիւնը ընդունվեցաւ ժողովից 445 ձայների բազմութեամբ 249 ձայնի դէմ։ Այժմ որ Ֆրանսիայում հիմնվեցաւ երկրորդ ժողով սենատ, 'ի հարկէ ազգային-ժողովի ոյժը պիտի նուազվի,—և այդ էլ այժմեան Ֆրանսիական կառավարութեան նպատակ էր։ Ազգային-Ժողովի առաջադէմ կուսակցութիւնը պահանջում էր որ գոնէ սենատի (Ծերակոյտի) անդամների մի մաս ընտրվէր ազգային-ժողովից և ոչ թէ ամենը նշանակվէին տերութենից։ Վերջին հեռագիրը հաղորդում է մեզ որ այդ աջողվեցաւ՝ կառավարութիւնը համաձայնութիւն տուեց որ սենատի անդամների երրորդ մասը նշանակվեր ազգային ժողովից։

## ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

„Մասիսում" կարդում ենք հետևեալը՝ Իզմիրի «Ամալթէա» անուն լրագրին հետևեալ դէպքը կը պատմէ։ Ամալիայի Օսմանեան Պանքայի ճիւղին անօրէն Պ. Վիլքինսի դեռահասակ կինը մեռնելով, մարմինը սնտուկի մը մէջ դրուած անգղիական Զուրա չոգենաւով Իզմիր կը ղրկուի թաղուելու։ Ճամբան բուռն մրրիկ մ'ելնելով, նաւաստիներն ու ճանապարհորդները՝ տարօրինակ նախապաշարումէ մը չարժեալ՝ ոտք կելնեն և կը պահանջեն որ մեռելակիր սնտուկն անպատճառ ծովը նետուի Յոնանայ պէս, որպէսզի մրրիկը դադրի։ ուստի սնտուկը բռնութեամբ կը բանան և մէջն երկու արծաթ մէճիտիէ կը գտնեն, որպէս զի եթէ հովէն ու ալիքներէն քշուելով երթայ ցամաք ծովեղր մ'ինչպէս, այն մէճիտիէները թաղման ծախուց գործածվին։ Այս զոհը մրրկին կատաղութիւնն աւելի կը սաստկացնէ։ Սնտուկն ստուգիւ ալիքներէն քշուելով՝ Սատանքէոյ կղզին կերթայ կինայ։ Հոն ազգայ մը զայն տեսնելով, կերթայ սնտուկը կը բանայ, բայց մէջի դիակը տեսնելուն պէս զարհուրելով կը փախչի և գեղացիի մը հանդիպելով կը պատմէ, Այն ժամանակ գեղացին կերթայ սնտուկը կը բանայ, և դիակը կոզոպտելով՝ վրայի հանդերձներն և մինչև իսկ սընտուկին կափարիչը կառնու կը տանի, առանց գտնէ դիակը թաղելու։ Վերջապէս քանի մ'որ ետքը խղճամիտ տաճիկ մ'անկէց անցնելով՝ կը գթայ մանկամարդի դիակին վրա և կը վերցնէ կը թաղէ։

***

Դեկտեմբերի 31-ին, ինչպէս յայտնի է, մեռաւ Զինացոց Կայսրը։ Զինական օրէնքով ամբողջ ազգը, բոլոր հպատակները պէտք է սուգ առնեն կայսրի մահուան պատճառով, միայն ժողովրդի այլ և այլ դասակարգերը զանազան կերպով են յայտնում իրանց սգաւոր լինելը։ Օրիորդներ մանդարինները բացի սև չորեր հագնելուց, ներկում են իրանց անների պատերը սև ներկով, իսկ ստորին ժողովուրդը ի նշան սգաւորութեան ածելում է գլխի մազերը և հագնում է նոյնպէս սև շորեր։

***

Վերջին մի քանի շաբաթները Թիֆլիսում անչափ շատ հիւանդութիւններ յայտնվեցան՝ տենդ, ջերմ, ծաղիկ և այլն, բայց մանաւանդ երեխաների հիւանդութիւնները բազմաթիւ են։ Ասում են որ նորերումս մի տան մէջ երեք երեխայ մի շաբաթվայ մէջ մեռան կրուպ անուանված ցաւից։

***

Եթէ գաւառներում ոքմին կամենայ ստանալ «Մշակի» խմբագրութենից գօկտոր Անդրէաս Արծրունու գրքոյկը ծծումբի մասին (ռուսերէն լեզուով կարդացած դասախօսութիւնը), թող բարեհաճի ուղարկել խմբագրութեան նամակի մէջ 25 կօպ. փոստի դրոշմներով և կը ստանայ յիշեալ գրվածքը։

***

Մի ֆրանսիացի քիմիքոս գտել է նորերումս մի բոլորովին նոր միջոց ապակի և ճենապակի պատրաստելու։ Այդ միջոցով չինած առարկաները բոլորովին չեն կոտրվում։ Բերլինում փորձեր արին այդ առարկաների հետ և բաւական մեծ բարձրութենից գցած բաժակներ, ամաններ և այլ իրեղէններ չէին կոտրվում։

## ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ


Շուտով լոյս կը տեսնէ „Վարդ և Մանիշակ" վերնագրով (եղերական վէպ գիւղական կեանքից) գիրքը։

2 (3) Գ. Շահվերդեանց

ՇԱՄԱԽԻՈՑ երկսեռ ուսումնարանների գրաբարարանի գանձապահ Ա. Մելիք-Շահնազարեանցը նոյն գրադարանական ընկերութեան կանոնադրութեան համաձայն, խոնարհաբար խնդրում է բացակայութեան մէջ այլ քաղաքներում գտնուող գրադարանի ներքոյ անուանեալ յարգելի անդամներից, այն է՝ Խորէն Վարդապետից 'ի Շուշի, Յովսէփ Վարդապետից և Հայրապետ Ղուկասեանցից 'ի Ալէքսանդրապոլ, Խորէն քահանայ Միրզաբէկեանցից, Գաբրիել Ռոմանոսկուց, Ներսէս Տէր Սարգիսեանցից և Մկրտիչ Եթաբէկեանցից 'ի Բագու, և Շահնազար բէկ Վլասեանցից 'ի Ջավատ, փութալ հայտնել գրատան թէ անցեալ ամբողջ տարվայ, թէ սոյն 1875 թ. Յունվար տրեատական տուրքը, քաջ գիտենալով, որ այդ փոքրիկ գրադարանը բաւականի նեղութիւն է զգում իւր դրութիւնը բարւոքելոյ համար, ժամանակին իրան բարեբարներից օգնութիւն չը ստանալով։ Մելիք-Շահնազարեանցը կարևոր է համարում յայտնել ևս թէ բացակայութեան մէջ լինող անդամները, յիսա ուղարկման իւրանց վճարը, ստանալու են գրատան գործակատարներից առանձին նամակով տեղեկութիւն, իսկ քաղաքում լինողները, որոնցից նոյնպէս խնդրվում է շուտով հայտնել իւրեանց անդամականները,—ապահովագիր նոյն իսկ գանձապահից։

29 յունվարի

Ա. Մելիք-Շահնազարեան

ՄԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ որ եկած է ՓԱՐԻԶԻՑ ցանկանում է ՖՐԱՆՍԻԵՐԷՆ լեզուի դասեր տալ։ Ցանկացողները կարող են դիմել Ալբերի Ֆոտոգրաֆիա։ 4 (5)

ԴՈՒՐՍ ԵԿԱՒ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ «ՍՈՒՄԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ»

Անունով լիակատար երգարան, որն բովանդակումէ իր մէջ ազգային, տեղական և եկեղեցական երգեր թուով 270։

Սորա մէջ գտնվում են գրեթէ այն ամեն թէ տպագրուած և թէ անտիպ երգերն, որոնք արդէն ժողովրդականութիւն են ստացած և երգվում ամեն տեղ։

Իւրաքանչիւր օրինակի գինն է 1 ռուբլ։

Ծախվում է Բագուայ Մարդասիրական ընկերութեան գրադարանում և պ. Գրիգոր Դիլդաբեանցի թէյի խանութում ի Բագու, իսկ Թիֆլիսում Վարդանեանցի և ընկ. գրավաճառանոցում։

Ցանկացողները կարող են դիմել կամ յիշեալ տեղերը, կամ թէ դէպի «ՍՈՒՄԱԿ» հրատարակիչը այս հասցէով. Въ Баку. Аваку Лазаревичу Григорьеву, въ Армянскомъ Училищѣ.

1 (2)

Ներ Արտուռ Գէորգեանցից։ Հիսէ Ի Ներսիսեանցից 8 դասերն։ Դիմել՝ Ցոռոմ Ցոդդոյ դղրվն նոր Ամիրդեանցիդրդ։

ՅՈՎՆԱՆ ՎԱՍՍՈՒՆԵՎ

Вышла и продается
Въ Редакціи газеты „Мшакъ"
ЛЕКЦІЯ Д-РА АНДРЕАСА АРЦРУНИ
СѢРА
ея химическія свойства
Техническое примѣненіе и геологическое положеніе
(цѣна 20 коп. съ пересылкой 25)

Родители, желающіе готовить своихъ дѣтей въ Реальное Училище для 1-хъ четырехъ классовъ, могутъ обратиться въ книжный магазинъ г. Энфіаджіянца или въ частное училище г. Балахова.

3 (3)


## ՏԵՂԵԿԱՑՈՒՑ

ՓԵՏՐՎԱՐԻ 13. ԹԻՖԼԻՍ. 1875.

### ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Փետրվարի 12-ին)

| | Ր. | Կ. |
|---|---|---|
| Ոսկին (պոլուամպրիալ). . | 5 | 90 |
| Բամբակ Երևանու. . . | 4 | 80 |
| „ Ամերիկայի սերմից | 6 | 65 |
| Բուրդը թուչի . . . | 6 | 40 |
| թարաքամի . . | 4 | |
| Շաքարը ռսի (բրօցկու) | 8 | 55 |
| „ միւս տեսակը . | 8 | 40 |
| „ զազրան, տրանզիտ. . . . | 4 | 65 |
| „ մաքրը վճարած | 7 | 75 |
| Շաքարաւազը Ռսի . . | 6 | 90 |
| Գահվա Լիմանի լաւը. . | 18 | 10 |
| „ Մոկո չատ լաւը | 19 | 70 |
| „ Մարտինկոի ցածր | 15 | |
| Աւիւրը Երևանի . . . | 1 | |
| Աւիւրը Գեանջու հասարակ. . . . | 1 | 5 |
| „ Շորագեալու. . | 1 | 20 |
| Գարին . . . . . | „ | 65 |
| Մոմ. . . . . | 10 | 50 |
| Փոխանակագիր Պոլսի | 6 | 40 |
| „ Դավրէժի | 4 | 46 |
| Լոնդոնի կուրսը (Օդեսայի վերայ) 1 լիրան արժէ. . | 7 | 17 |
| Մարսէլ և Փարիզ 351 ֆր. արժէ . . . . . | 100 | |

### ՀԵՌԱԳԻՐ

Քսան բառից կազմված հեռագիրը ածէ՝

| | Ր. | Կ. |
|---|---|---|
| Կովկասի և Անդրկովկասի գլխաւոր քաղաքները. . . . . | 1 | |
| Նոր-Նախիջևան. | 1 | |
| Մոսկվայ, Ս. Պետերբուրգ. Նիժնի-Նովգորոդ . | 2 | |
| Աւստրիա . . . | 2 | 75 |
| Անգլիա. . . . | 3 | 75 |
| Գերմանիա. . . | 2 | 63 |
| Թիւրքիա . . . | 3 | |
| Ֆրանսիա . . . | 3 | 50 |

### ՆԱՒԵՐ

Օդեսայից Փոթի (ամառը) նաւը դուրս է գալիս հինգշաբթի օրերը ժամը 2-ին կէս օրից յետոյ։

Փոթիից Օդեսա կիրակի 6 ժամին կէս օրից յետոյ։

Օդեսայից Փոթի (ձմեռը) հինգշաբթի օրերը 3 ժամին։

Փոթիից Օդեսա չորեքշաբթի օրերը առաւօտեան։

Փոթիից Կ. Պոլիս նաւը դուրս է գալիս երկուշաբթի առաւօտները։

Կ. Պոլսից Փոթի կիրակի առաւօտները։

### ՓՈԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 8 ժամին 18 րոպէ առաւօտեան։ Մինչև Սուրամ (խառն գընացքը) երեկոյեան 8 ժամ. 17 րոպէ։

| | առաւօտ. | երեկոյեան |
|---|---|---|
| Թիֆլիսից . . | 8. 18 | 8. 17 |
| Մցխէթ. . . | 9. 18 | 10. 48 |
| Գորի. . . | 11. 39 | 1. 43 |
| Սուրամ. . . | 1. 52 | 4. 30 |
| Քութայիս . . | 7. 55 | |
| Փոթի. . . . | 11. 27 | |

| | առաւօտ. |
|---|---|
| Փոթիից . . | 7. 38 |
| Քութայիս . . | 10. 12 |
| Սուրամ. . . | 4. 57 |
| Գորի. . . . | 7. 23 |
| Մցխէթ. . . | 9. 52 |
| Թիֆլիս. . | 10. 49 |

Թիֆլիս գալիս է ճանապարհորդների գնացքը երեկոյեան 10 ժամին 49 րոպէ։

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

| | I կլաս. | II կլ. | III կլ. |
|---|---|---|---|
| Մցխէթ . | 90 | 68 | 38 |
| Գորի. . , | 3. 20 | 2. 40 | 1. 33 |
| Սուրամ. | 5. 22 | 3, 92 | 2, 18 |
| Քութայիս | 9. | 6. 75 | 3. 75 |
| Փոթի . . | 13. 1 | 9. 75 | 5. 42 |

### ՓՈՍՏ

Ընդունում է

Ռուսաստան և Եւրոպա ամեն օր, բացի կիրակի։

Երկուշաբթի

Երևան (Զուլֆ, Պարսկաստան) Օղուրգէթ, Ախալցխայ, Բէլի Կլիչ, Բագուի և Գանձակի նահանգ (ծանր փոստ).

Երեքշաբթի

Սև և Ազով ծովի ռուս նաւահանգիստներ (ձմեռը) Բագուի և Գանձակի նահանգներ (թեթև փոստ)։ Նովի (Յարսկի Կօլօդցի, Զաքաթալ, Սղնախ, Թէլաւ, Լագօդէխ) թեթև փոստ։

Չորեքշաբթի

Երևան, (Զուլֆ, Ալէքսանդրապոլ, Նոր-Բայազէդ) Զուգդիդ։

Հինգշաբթի

Սև և Միջերկրական ծովի տաճկաց նաւահանգիստներ։

Ուրբաթ

Երևան (Զուլֆ, Պարսկաստան, Ալէքսանդրապոլ) Օղուրգէթ, Ախալցխա, Բէլի Կլիչ, Սև և Ազով ծովի ռուս նաւահանգիստներ, (ամառը), Բագուի և Գանձակի նահանգները (թեթև փոստ).

Շաբաթ

Նովի, (Յարսկ. Կօլօդ, Զաքաթ. Սղն., Թէլաւ).

Փոթի-Թիֆլիսեան երկաթուղու կէտեր ամեն օր, բացի կիրակի։

### ՆԱՄԱԿՆԵՐ

| | կօպ. |
|---|---|
| Բաց նամակը ածէ. . | 5 |
| Ռուսաստան նամակը | 10 |
| Գերմանիա, Աւստրիա | 10 |
| Ֆրանսիա. . . . . | 13 |
| Անգլիա . . . . . | 14 |
| Շվէյցարիա. . . . | 14 |
| Թուրքիա (Կ. Պոլիս . | 20 |
| Թիւրքիա (ցամաք) . . | 20 |
| Իտալիա . . . . . | 16 |
| Ամերիկա . . . . . | 28 |
| Պարսկաստան . . . | 10 |
| Հնդկաստան . . . . . | 70 |
| Եգիպտոս . . . . . | 27 |

### ՓՈՍՏԻ ԿԱՌՐԵՐ

Թիֆլիսից Վլադիկաւկաս ամեն օր ամառը 6 ժամին կէս օրից յետոյ իսկ ձմեռը 4 ժամին։

Թիֆլիսից Պիատիգորսկ, Ստավրապոլ և Ռոստով հինգ շաբթի և շաբաթ օրերը 6 ժամին առաւօտեան։

### «ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—Դերբէնդ. Ս. Ս. Սիրելի բարեկամ իմ, միայն անխնայ պատերազմելով մեզ շրջապատող ինքնահաւան, յանդուգն տգիտութեան հետ, կը հասնենք ժամանակով ճշմարտութեանը։

—Գանձակ. Գ. Ֆ. Բ. Պարոն Տէր-Ներսէսեանը կամենումէ մի օրինակ «Մշակի» նուիրել Բ. գիւղի դպրոցին,—մենք էլ նրա օրինակին հետևելով կը նուիրենք մի օրինակ Խ. անապատի դրպրոցին և ուրիշներ երեք համար միասին կուղարկենք։

—Դերբէնդ. Գ. Շ. Դ. Շ. Ստացանք 12 ռուբլ «Փոնջի» ծախված հատորներից։

—Շուշի. Шушинское Собраніе. Մեր լրագիրը հինգ ռուբլ ածէ։ Ինչի՞ էք ուղարկել 6 օթ.,—չը գիտենք։ Ինչ պէտք է անենք երկու ռուբլի հետ։

—Եկատերինոդար։ Աւետիք Թամանցի։ Դուք ուղարկեցիք միայն չորս ռուբլ տարեկան վճար «Մշակի», այն ինչ յայտնի է թէ նա հինգ արժէ։

—Շուշի. Կանչեցեանց. Հարցրինք „Тифл. Вѣстн." խմբագրատան մէջ՝ մեզ ասացին թէ ձեր համարները արդէն ուղարկված են։ Ցետ դարձնենք ձեզ ձեր նամակը թէ ոչ։

—Զալա-Օղլու. Տիկին Ե. Ց. Ա. Ստացանք պ. Մ-ից «Մշակի» ձեր տարեկան վճարը։

Дозволено цензурою 12 Февраля 1875 г. Тифлисъ Типографія Меликова и К-° Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ